ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հովհաննես Շիրազ բանաստեղծը և մտածողը

ԴԱՍԱՐԱՆ՝ 7-րդ

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 5շաբաթ

ՏԵՍԱԿԸ՝ գործնական(կիրառական)

ՁԵՎԱՉԱՓԸ՝ վերջնական արդյունք

Ուսուցիչ՝ Աննա Յարալյան

Նախագծի նկարագիրը

Կրթության նպատակը մեկն է՝ սովորողների անձնային որակների և ուղղվածության համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցում,կարողությունների,հմտությունների ձևավորում,ինչպես նաև դրանց կիրառումը կյանքի տարբեր փուլերում ու ոլորտներում:Նախագծային ստեղծագործական հետազոտական մեթոդը կարելի է համարել տարաբնույթ աշխատանքների ամբողջականություն,գիտելիքների և կարողությունների գործնական կիրառություն ,վերլուծություն և գնահատում:Նախագծային աշխատանքը թույլ է տալիս կիրառել մանկավարժական զանազան մեթոդներ,իսկ առաջադրվող խնդիրների լուծման համար՝նաև ինքնաստեղծ միջոցներ և հնարներ:

Նախագծային աշխատանքը ուսուցանողին և ուսումնառողին տալիս է անսահմանափակ հնարավորություն՝ազատ դաշտ ստեղծելով երկուստեք(սովորողսովորեցնող)պլանավորած աշխատանքն իրականացնելու համար:

Խնդրի հստակեցումը,նպատակի ձևակերպումը և նախգծի նկարագրի ստեղծումը նախագծային աշխատանքի նախապայմաններից են:Կարևորագույն փուլերից է աշխատանքի պլանավորումը:Որպես կանոն՝նախագծի աշխատանքի պլանի իրականացումը կապված է հասանելի գրականության,տեղեկատվության ընտրության,տարբեր փորձարարությունների,հետազոտությունների,հարցումների վերլուծությունների,ինչպես նաև հետևությունների ձևակերպմն և այդ հիմքի վրա նախագծի լուծման սեփական տեսանկյուն ձևավորելու հետ:

Նախագծի նպատակը՝

- Սովորեցնել աշակերտին հասկանալ Շիրազ բանաստեղծի և անհատ մտածողի նմանություններն ու տարբերությունները:
- Նկարագրել Շիրազի ստեղծագործության բնորոշ հատկանիշները և ցույց տալ,որ այդ հատկանիշների ամբողջությունն էլ հենց այն անհատականությունն է,որով նա տարբերվում է մյուս ստեղծագործողներից:
- Ներկայացնել Շիրազին որպես ժողովրդական մարդ և ստեղծագործող:
- Նպաստել սովորողի ճանաչողական,վերլուծական և եզրակացություններ անելու կարողությունների զարգացմանը:
- Նպաստել հաղորդակցական հմտությունների մշակույթի ձևավորմանը:
- Զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները:

Խնդիրները

Առանցքային

- Հ.Շիրազ անհատի և ստեղծագործողի դերը գրականության մեջ:
- Շիրազի պոեզիայի արդիականությունը :

Այլ

- Զարգացնել վերլուծական և ստեղծագործական միտքը:

Վերջնարդյունքները

Սովորողը կարողանա

- ✓ Շիրազի ստեղծագործության ընդհանուր հատկանիշները:
- ✓ Ներկայացնել Շիրազին որպես անհատ:
- ✓ Ներկայացնել հայտնի մարդկանց մտքերըբև հուշերը Շիրազի մասին:
- ✓ Օգտվել տարբեր տեղեկատվական աղբյուրներից:
- ✓ Կարևորել հետազոտական աշխատանքի դերը:
- ✓ Կարողանալ օգտվել սեփակաբ գիտելիքների պաշարից:
- ✓ Կայացնել համարձակ որոշումներ:
- ✓ Լինել պատրաստակամ որևէ նախաձեռնությամբ հանդես գալու,սկսելու,ավարտելու,փոփոխություն կատարելու,կատարելագործելու:
- ✓ Լինել պատասխնատու սեփական որոշումների և եզրահանգումների համար:

Նախագծի վերջնարդյունքը

Սովորողը պետք է կարողանա՝

- ✓ Կատարել վերլուծություն:
- ✓ Ներկայացնել բանաստեղծի ապրած ժամանակաշրջանը ,ծննդավայրը :
- ✓ Ներկայացնել բանաստեղծի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:
- ✓ Նկարագրել և բացատրել,թե ինչ նպատակով կարող է օգտագործել իր գիտելիքները:
- ✓ Կարողանա օգտվել տարբեր տեղեկատվական աղբյուրներից:
- ✓ Կարողանա անկաշկանդ խոսել և ներկայացնել իր աշխատանքը,պաշտպանել սեփական տեսակետը:
- ✓ Ձևավորել մի շարք հմտություններ՝հաղորդակցման,վերլուծություններ կատարելու,թիմային աշխատանքի,էթիկական վարքագծի,պատասխանատվության,քննադատական մտածողության,համարձակորեն ծրագրեր և տեսլականներ ներկայացնելու և այլն...

Միջառարկայական կապեր՝ Հայոց լեզու,պատմություն:

Գործողությունների պլանը (5 ժամ)

Դաս 1.Նախապատրաստական աշխատանք (1 ժամ)

Սովորողների հետ կարճ զրույց՝թեմայի ընտրության մեջ կողմնորոշվելու համար:Թեմայի ընտրություն:

Ուղղորդել աշակերտներին տեղեկատվական և անհրաժեշտ գրականագիտական աղբյուրներ որոնման հարցում:

Դերերի բաշխում.

Նաշագծին մասնակցում են 9 աշակերտ,որոնք կբաժանվեն 3ական խմբերի՝ստանալով առանձին հանձնարարություններ:

Դաս 2. Նախագծի բուն ընթացք (3 ժամ)

Աշակերտներն ըստ հավաքագրած նյութերի և կատարած ուսումնասիրությունների՝ներկայացնում են Շիրազի կյանքը,ստեղծագործության բնորոշ առանձնահատկությունները,անդրադառնում են Շիրազի պոեզիայի արդիականությանը,ներկայացնում Շիրազին՝որպես մայրապաշտ և մասիսապաշտ մեծ բանաստեղծ:

Դաս 4

1.Ուսուցիչը կատարում է դիտարկումներ,աշակերտներին օգնում խորհուրդներով՝ նրանց նախապատրաստելով նախագծի պաշտպանությանը:

2.Աշակերտները վերլուծում են կատարած աշխատանքները,կատարում որոշակի ուղղումներ և շտկումներ:

Դաս 5

Այս ժամը փաստացի նախագծի պատրաստությունն է:

Սովորողը պետք է կարողանա ներկայացնել իր աշխատանքը,նկարագրել նախագծի ընթացքը,ճիշտ ձևակերպել մտքերը, խոսել ազատ,համոզիչ, անկաշկանդ,պատասխանել իրեն տրված հարցերին,հստակ պատասխանել այն հարցին,թե ի՞նչ սովորեցին նախագծի ընթացքում ,ինչո՞վ էր հետաքրքիր նախագիծը:

Օգտագործված գրականություն

1. Նախագծային ուսուցում. Ա.Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին):